«ԲԼԵՋԱՆ» բնապահպանական, սոցիալական, բիզնեսի աջակցության հասարակական կազմակերպություն

«Թափանցիկ տեղական ինքնակառավարում»

ԾՐԱԳԻՐ

Բովանդակային հաշվետվություն

01.09-30.11.2016

Ծրագրի ֆինանսական
աջակիցներ

Brot für die Welt

ք. Գավառ

ՀՀ մարզերում, առավել ևս Գավառ քաղաքում, քաղաքացիական հասարակությունն ի դեմս երիտասարդների, մեղմ ասած իրազեկ չէ տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությանն ու պարտավորություններին վերաբերող գործընթացներից, քանի որ սոցիալ-տնտեսական, կրթական ու մշակութային, գործազրկության հիմնախնդիրների կողքին հանրության համար այդ խնդիրները արդիական չեն համարվում: Սակայն չպետք է մոռանալ, որ գիտելիքի պակասը, ոչ պատշաճ տեղեկացված լինելը, իրավունքների ոչ ճիշտ իրացումը նույնպես բերում է վերոնշյալ խնդիրների խորացմանը: Հետևաբար այդ խնդիրները տրամաբանորեն շաղկապված են միմյանց հետ և, որպես կանոն, հանգեցնում են նրան, որ երիտասարդները մեկուսանում են, կորցնում հավատը սեփական ուժերի հանդեպ ու չեն փորձում ինչ-որ բան նախաձեռնել ինքնուրույն, արդյունքում դժգոհ են իրավիճակից, լքում են երկիրը, բայց չեն փորձում փոխել իրավիճակը: Այս ամենը հիմնականում հետևանք է օրենքների չիմացության, ինչն էլ հանգեցնում է քաղաքացիների պասիվության, որն էլ բերում է նրան, որ քաղաքացիները չեն մասնակցում հասարակական-քաղաքական կյանքին:

Համաձայն ՀՀ Սահմանադրության և օրենքների Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիներն ունեն տեղեկացված լինելու ու համայնքի զարգացմանը մասնակցելու իրավունքներ: Սակայն նրանց իրական մասնակցությունը համայնքի տնտեսական, հասարակական, քաղաքական կյանքում դեռևս նշանակալից չէ, քանի որ մարդիկ բավարար չափով իրազեկված չեն, ներգրավված չեն ոլորտի գործընթացներին, ուստի դրանով էլ պայմանավորված է նրանց քաղաքացիական պասիվությունը:

Այս ամենը հաշվի առնելով «Բլեջան» ՀԿ նախաձեռնել և իրականացրել է Թափանցիկ տեղական ինքնակառավարում ծրագիրը, որի **նպատակն էր՝** նպաստել Գավառ քաղաքում տեղական մակարդակում թափանցիկ և ժողովրդավար կառավարման համակարգի ձևավորմանը, հանրության իրազեկության մակարդակի և երիտասարդների ներգրավածության բարձրացման միջոցով:

Ծրագիրը խնդիր ուներ

- ✓ Բարձրացնել Գավառ համայնքի հանրության, մասնավորապես 20 երիտասարդների իրազեկության մակարդակը ՏԻ գործընթացների վերաբերյալ՝ անցկացնելով դասընթացներ, խորհրդատվական հանդիպումներ, քննարկումներ, ակտիվացնելով նրանց քաղաքացիական նպատակաուղղվածությունը:
- ✓ Խթանել թիրախային իրազեկված խմբերի մասնակցությունը ՏԻՄ մակարդակում որոշումների ընդունման գործընթացում, ձևավորել ՏԻՄ բարեփոխումների երիտասարդական նախաձեռնող խումբ:
- ✓ Մասնակցել Գավառի ավագանու նիստերին և համայնքային հիմնախնդիրների վերաբերյալ ներկայացնել առաջարկություններ համայնքային զարգացման ծրագրում ներառելու համար:

Ծրագիրն իրականացվել է Գավառ քաղաքում, 3 ամիս ժամկետով՝ 01.09-30.11.2016:

Ծրագրի նպատակին հասնելու համար իրականացվել են հետևյալ քայլերը:

- **<u>Նախապատրաստական փուլ- կես ամիս- 01.09-15.09.2016:</u>**

  Կնքվել են պայմանագրեր ծրագրի կառավարման թիմի հետ, ձեռք բերվել պայմանավորվածություններ ՏԻՄ-ի հետ, գնվել են անհրաժեշտ նյութեր, հավաքագրվել են երիտասարդներ, իրականացվել կրթական սեմինարներ, որից հետո ծրագրում աշխատող երիտասարդների ընտրություն.

- Պատրաստվել է հայտարարության տեքստ և հայտի ձև երիտասարդների ներգրավման համար /կից Հավելված 1, Հավելված 2/:
- Հայտարարվել է մասնակիցների հավաքագրում /համացանցի օգնությամբ տրվել հայտարարություն/:
- Իրականացվել է հայտերի ընդունում և մասնակիցների ընտրություն: Ընտրվել են 20 ակտիվ երիտասարդների:
- Կնքվել են պայմանագրեր ծրագրի աշխատակազմի և փորձագետ-խորհրդատուի հետ:
- Կազմակերպվել է երիտասարդների համար 2 օր, 4-ական ժամ տևողությամբ դասընթացներ - ծրագրի փորձագետի օգնությամբ իրականացնել դասընթացներ՝ ՏԻՄ ոլորտի տեղական և միջազգային օրենսդրության վերաբերյալ թեմաներով /կից Օրակարգը, Հավելված 3/,

Դասընթացների ընթացքում նախ ներկայացվել է ծրագրի նպատակներն ու արդյունքները, դրանց հասնելու գործողությունները: Դասընթացներն իրականացվել են ոչ ֆորմալ կրթության մեթոդաբանական սկզբունքներին համահունչ՝ մասնակցային վարժություններ, խաղեր, անհատական և թիմային առաջադրանքներ, հարցադրումներ, մտքերի գրոհ և այլն: Խրախուսվել է փոխօգնությունը և թիմային ոգին, մասնակիցների գնահատումը և առաջարկությունները: Նյութերը տպագիր և էլեկտրոնային ձևով տրամադրվել են մասնակիցներին:

Դասընթացների ընթացքում ուսումնասիրվել Գավառի քաղաքապետարանի կայքը, ցուցադրելով տարբեր քաղաքների օրինակելի կայքեր:

Դասընթացներից հետո, 2 օրյա ժամկետում, փորձագետ-խորհրդատուի օգնությամբ իրականացվել է ծրագրի մասնակից 8 երիտասարդի ընտրություն, ովքեր աշխատեցին ծրագրում որպես ծրագրի աջակից-տեղական փորձագետներ:

Ծրագրի հաջորդ փուլը հիմնական փուլն էր, որի ընթացքում իրականացվել են հանդիպումներ և քննարկումներ համայնքապետի, ավագանիների, բնակչության և ՀԿ ներկայացուցիչների հետ, ոլորտային տարբեր խմբերի հետ, հավաքագրել առաջարկություններ:

- Ծրագրի ամբողջ աշխատանքային թիմը հանդիպել է ՏԻՄ ներկայացուցիչներին, ձեռք բերել պայմանավորվածություն՝ ծրագրին հետագա աջակցության համար՝ ներկայացնելով ծրագիրը
- Ընտրված և վերապատրաստված երիտասարդերի աջակցությամբ կազմակերպվել է հանդիպում քննարկում Գավառ քաղաքի 2012-2016թթ. համայնքային զարգացման ծրագրի վերաբերյալ հաշվետվություն՝ ներգրավելով ՔՀԿ, ԶԼՄ, պետական և տարածքային կառավարման մարմինների ներկայացուցիչների և ակտիվ երիտասարդների

Հանդիպման ընթացքում քաղաքապետարանի աուդիտի բաժնի աշխատակիցը ներկայացրեց վերջին 4 տարիներին ՏԻՄ-ի կողմից կատարված ծախսերը, առաջացած հարցերին պատասխանեցին ՏԻՄ-ի համապատասխան բաժնի մասնագետները

http://www.gavariqaghaqapetaran.am/news/316

- Կազմակերպվել են հանդիպումներ տարբեր ոլորտային խմբերի հետ: Ծրագրի աջակից երիտասարդների օգնությամբ կազմակերպվել է տարբեր ոլորտների ներկայացուցիչների՝ կրթություն, առողջապահություն, բնապահպանություն, գյուղատնտեսություն, սոցիալական, հետ հանդիպումներ, հանդիումների, քննարկումների միջոցով վեր է հանել համայնքային խնդիրները և հավաքագրել առաջարկություններ համայնքային զարգացման ծրագրում ներառելու համար.



• Իրականացվել են աշխատանքներ FB սոցիալական ցանցում, նախ ստեղծվել է Թափանցիկ տեղական ինքնակառավարում փակ խումբ, որը եղել է աշխատանքային, որտեղ քննարկվել են ամեն շաբաթվա գործողությունները, սական ամբողջ ծրագրի ընթացքում, ամեն շաբաթը 1 կամ 2 անգամ տեղի են ունեցել նաև հանդիպումներ Գավառի Օրհուս կենտրոնում, որի ժամանակ կրկին քննարկվել են ծրագրի ընթացքում ծագած խնդիրները, տրվել լուծումներ:

• Երիտասարդներից յուրաքանչյուրն իր սոց օգտատերի օգնությամբ առկա տեղեկատվությունը տարածել է, թե ծրագրի մասին, թե ՏԻՄ-ի գործունեության հետ կապված և առցանց հավաքագրել առաջարկներ:
Երիտասարդները ծրագրի ընթացքում մասնակցել են Գավառ համայնքի նորընտիր ավագանու 1-ին նիստին, որը հեռարձակվել է նաև օնլայն, նիստից հետո ամբողջ տեղեկատվությունը նույնպես երիտասարդները տարածել են սոց ցանցերով /http://www.gavariqaghaqapetaran.am/news/317 /

Ծրագրին աջակից երիտասարդները մասնակցել են նաև Գավառի քաղաքային գրադարանի կողմից կազմակերպված ավագանիների հետ հանդիպմանը, որի նպատակը նորընտիր ավագանու անդամների և երիդասարդների անմիջական շփումն էր՝ առանց փողկապի, ինչպես նաև քննարկման միջավայրի ձևավորումը, որը հնարավորություն կտա ավելի սերտացնել ՏԻՄ - հասարակություն կապը: Քննարկման ժամանակ երիտասարդները բարձրացրել են համայնքի զարգացմանն ուղղված տարաբնույթ հարցեր և ստացել պատասխաններ

- Ծրագրի վերջին ամսում՝ ավարտական փուլում ձևավորվել է թիմ և կազակերպվել հանդիպում բոլոր շահագրգիռ կողմերից /ՔՀԿ, ՁԼՄ, ՀԿ, տարբեր ոլորտային խմբերից, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններից ներկայացուցիչներ,/ ընտրելով ներկայացուցիչներ, հավաքագրված առաջարկությունները մշակելու և առաջարկների փաթեթը ձևավորելու գործում:

Հանդիպման ընթացքում ծավալվեց ավելի լայն քննարկում, եղան նոր առաջարկներ, լրամշակվեց առաջարկությունների փաթեթը: Խոսվեց նաև այն մասին, որ պետք չէ բավարարվել միայն ծրագրով նախատեսված գործողություններով, այլ շարունակել ակտիվ համագործակցել ՏԻՄ-ի հետ, մասնակցել բոլոր հանդիպումներին, քննարկումներին, լինել նախաձեռնող: Ավագանիներից մեկն էլ առաջարկեց այս քննարկումը տեղափոխել քաղաքապետարան, քննարկել բոլոր ավագանիների և ավելի մեծ թվով քաղաքացիների հետ:

- ծրագրի փորձագետի կողմից խմբագրվել և վերջնական տեսքի է բերվել առաջարկների փաթեթը և որը ներկայացվել է ՏԻՄ-ին /կից առաջարկությունների փաթեթը՝ Հավելված 5/: Քանի որ ՏԻՄ-ը պլանավորել է հաջորդ նիստը նոր տարում, իսկ ծրագրի ժամկետներում հնարավոր եղավ ընդամենը 1 նիստի մասնակցել, որի ժամանակ դեռ պատրաստ չէր առաջարկությունների փաթեթը, ուստի որոշվեց ավագանիների էլ. հասցեներին ուղարկելուց հետո այն տրամադրել ՏԻՄ-ին և առաջարկել, որ արտահերթ նիստ հրավիրի փաթեթը քննարկելու համար:
- ՀԿ-ի ջանքերով և երիտասարդների օգնությամբ նկարահանվել է 3,18 րոպե տևողությամբ 1 սոցիալական հոլովակ ծրագրի կամավորների, քաղաքացիների իրավունքների և ՏԻՄ պարտականությունների մասին: Այն ցուցադրվել է Գեղամա հեռուստատեսությամբ, տեղադրվել www.youtube.com ու տարածվել տարբեր սոցիալական ցանցերում : https://www.youtube.com/watch?v=ClkJzTg7md0
- Ծրագրի վերջում կազմակերպվել է արդյունքների ամփոփիչ հանդիպում՝ որին մասնակցեցին ծրագրի շահառուները, տարածքային կառավարման և ՏԻմ ներկայացուցիչները, դոնոր, ՁԼՄ-րի, ՀԿ ներկայացուցիչներ: Հանդիպմանը ցուցադրվեց սոցիալական հոլովակը, նաև ծրագրի աջակից 8 տեղական փորձագետներին հանձնվեցին հավաստագրեր:

- Կազմվել է նաև ֆինանսական հաշվետվություն և ներկայացվել դոնորին:

Այս ծրագիրը՝

- Նպաստել է Գավառ քաղաքի 20 երիտասարդների ՏԻ գործընթացների վերաբերյալ իրազեկվածության բարձրացմանը
- Նպաստել է իրազեկված խմբերի մասնակցությանը ՏԻՄ մակարդակում որոշումների ընդունման գործընթացում
- Առաջացրել է փոփոխություն Գավառի երիտասարդական և ՏԻՄ առօրյայում, հանգեցրել է նոր գաղափարների և նախաձեռնությունների:
- Խթան է հանդիսացել որպեսզի այլ երիտասարդներ ևս հետաքրքրություն ցուցաբերեն ՏԻՄ կառավարմանը մասնակցելու, քանի որ ծրագրում ներգրավված երիտասարդներն իրենց ստացած տեղեկությունները, հմտությունները, տպավորությունները կիսել են իրենց հասակակիցների հետ:
- Նպաստել է քաղաքացիական ակտիվիզմին
- Ծրագրի շահառուները զարգացրել են իրենց քաղաքացիական հմտությունները, դիրքորոշումը, պատասխանատու և ակտիվ քաղաքացիության որակները:

Ծրագրի շարունակելիությունը

Ստեղծվել է 8 երիտասարդներից կազմված աշխատանքային խումբ, ովքեր մշտապես ներգրաված կլինեն ՏԻՄ-ի աշխատանքներին, տեղական կառավարման գործընթացները պարբերաբար ուշադրության կենտրոնում կպահեն, ընթացքում կներգրավեն նոր մարդկանց, որ սերնդափոխության դեպքում էլ գործընթացը չխաթարվի, այդպիսով ունենալով համապատասխան գիտելիքներ և հմտություններ, իրացնելով իրենց իրավունքները, աստիճանաբար տեր կկանգեն իրենց քաղաքին ու երկրին:

Ծրագրի մասնակից երիտասարդները կապ կպահպանեն ԲԼԵՋԱՆ ՀԿ-ի հետ, թեկուզ ամիսը մեկ անգամ, կիրականացվեն քննարկումներ և այլն:

Ծրագրի գնահատում և վերահսկում

Ելնելով աշխատանքային պլանից՝ իրականացվել է պլանավորվածի հետ համադրման գործընթաց: Վերահսկումը իրականացվել է ծրագրի ղեկավարի կողմից:

Դասընթացների ավարտին երիտասարդների լրացրած գնահատման թերթիկները հնարավորություն են տվել տեսնել թերացումները, շտկել դրանք, փոփոխություններ իրականացնել շահառուների առաջարկություններով: Ծրագրային մյուս միջոցառումների ժամանակ ևս առաջադրվել են հարցեր, որոնք նպատակ են ունենեցել պարզել, թե ծրագրային գործողությունները տանու՞մ են ծրագրի խնդիրների և նպատակի իրականացում:

Ծրագրի ընթացքը արձանագրելու համար օգտագործվել են գրացնման թերթիկներ, լուսանկարներ, սոց. հոլովակների սկավառակները, հայտարարության տեքստը և այլն:

Եզրակացություն

Լիահույս ենք, որ այս ծրագրի իրականացամբ մեկ անգամ ևս հիմք դրվեց որոշումների ընդունման գործընթացներին մասնակցային մշակույթին, ծրագիրը նպաստեց, որ Գավառ քաղաքում տեղական մակարդակում թափանցիկ և ժողովրդավար կառավարման համակարգը զարգանա, հանրության իրազեկության մակարդակի և երիտասարդների ներգրավածության բարձրացման միջոցով փորձ արվեց ակտիվացնել և խթան հանդիսանալ, որպեսզի երիտասարդներն իրենք անձամբ սկսեն ինքնուրույն նախաձեռնություններով հանդես գալ հասարակական ոլորտում դառնան ավելի ակտիվ:

Այսօր ամեն մի երիտասարդի զարգացմանն ուղղված յուրաքանչյուր ձեռնարկում իր արդյունքն է տալու, քանի որ յուրաքանչյուր քաղաքացու ձևավորումը մեծ արժեք է մեր երկրի համար: Այս մեծ առաքելությանն էր միտված իրականացված ծրագրի հեռահար նպատակները:

Հուսով ենք, որ ծրագիրը իր արդյունքները կտա և հնարավորություն, որ երիտասարդները շարունակեն նույն ոգով նաև ապագայում: